

ԿԻՉՈՐՈՒՄԵՐԻՆ

Քաղաքային «Կոմալրի» օրաթերթի հավելված,

1990 թ. նոյեմբեր, № 2: Գինը՝ 50 կոպ.:



ԴԻՄԱԳՐԱՎԵՆՔ ԱՂԵՏԻՆ, ԼԻՆԵՆՔ ԱՐԻԱԿԱՄ

7-ր դեկտեմբերի 1988 թ.:


Այդ սովորական արշալույսով սկսված օրը կարծես երկրագունդը խախտվեց իր առանցքից: Ահռելի ուժի ստորգիծանյա ցնցումները վայրկյանների ընթացքում փլատակների վերածեցին Շիրակի դաշտի, Գուգարքի ու Լոռու բազմաթիվ բնակավայրեր, զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Եվ այսօր սուգ է դարձրել հարվածներից սպառված, իր լեռներում կղզիացած հայոց աշխարհում:

Արհավիրքը շինայեց մեր սիրելի ոստան Գյումրի-Լենինականին, ուր ավերվեց բնակելի ու հասարակական շենքերի մեծ մասը: Արդյունաբերական ձեռնարկությունները վերածվեցին հսկայական փլատակների: Զգույրյան գիրկն անցան բազմաթիվ ու բազմաթիվ լենինականացիներ, որոնց անդառնալի կորուստը երկաթ մնալու մեծ սրտերում և մեր պատմության էջերում: Երկրաշարժի կամփոփ խեղճի եեն հայրենասեր, արարող, հյուրասեր, կենսախիղճ ու ավանդապահ գյումրեցու (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

1988 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 7



ՇՏԱԲԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ԴՐՍՈՒՄ :



Քաղաքագետներն անցնում են ժամանակի հետ, ժողովուրդը մնում է:

Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը խղից հազարավոր կրակներ. դա մեր ընդհանուր վիշտն է: Բայց այդ ահավոր աղետի օրերին դրսևորվեցին մարդկային ոգու լավագույն հատկանիշները, խորհրդային մարդկանց, մեր երկրի բոլոր ժողովուրդների անկեղծ կարեկցանքն ու համերաշխությունը: Մեր վիշտը սրտագին կարեկցանք և արձագանք առաջացրեց աշխարհի բոլոր կողմերում: Այս օրերին հատկապես ակնբախտրեն դրսևորվեց ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրության ուժը: Խորհրդային մարդկանց ընդհանուր կամքն այն է, որ առաջիկա տարիներին ավերակների տեղում բարձրանան նոր բարձրներ և գյուղեր: Հայաստանի ժողովուրդը կարող է վստահ լինել, որ դա այդպես էլ կլինի:

Մ. Ա. ԳՈՐԲԱՆՈՎ

... Մենք անպայման կտոկանք աղետի հանդեպ, կմարտնենք բոլոր հողակտորներն ու փլատակները, կվերականգնենք մեր բարձրներն ու գյուղերը: Մա մեր պարտականությունն է այսօրվա ու գալիքի հանդեպ: Եվ այդ պարտքը մեր սերունդը կկատարի:

Ս. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԿԿ Կենտկոմի ստաշին քարտուղար



*Խարսկապետեր և Տեքսապոլետեր,
առոթից ու սօքսի հեկա Տեր երեսները շրջելով ցուցնալով
լցված ժողովրդի կողմը և շնչի Տեր ավերված խաղախները,
այդ, վիշտը Տեր արտերում, սակայն սասուց
հասախորյան, Տեղ չգտալով պարզմասներ: յուսալոր,
հասալոր, սակարգապետի հոգով, կորը շնչերով ընդու
նեկ Տեր ճակատագրից, արխարար ցանկերով ցանկալ
յան փորձություն և Տեղ սեղան կա կաշտանալով
պասկերով խաղաղությանը օձված ժողովրդին:*

ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱՅՈՂԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ԴԱՅՈՑ

ԴԻՄԱԳՐԱՎԵՆՔ ԱՂԵՏԻՆ, ԼԻՆԵՆՔ ԱՐԻԱԿԱՍ

Մեզանից 1-ին էջում:

ոգրս, բաժանարար ու բոլորը լավալի դեմք:
Եւրոպա, հարկավոր են ցավակցություններ ու մխիթարանք, որ մազը իրեն մեծակ չզգա անշափելի դժբախտության մեջ: Բայց այժմ վշտի ծանրությունից շպտեմ է փվի մեր հոգու սյունը, մեր մարմինը պահող ռդնաշարը: Առաջին հերթին արագ գործողություններ են հարկավոր փլատակներից դեռևս ապրողներին հանելու համար: Հայաստանին հասած ռդբերգությունն արձագանք է գտել Սովետական Միության եղբայրական ժողովուրդների զավակների, մեր բարեկամների ու աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց սրտերում: Նրանք չեն բավարարվում հայ ժողովրդին ցավակցելով, այլ իրենց գուրքն ու կարեկցանքն արտահայտում են տուժածներին անհասպող օգնելու պատրաստակամությամբ, արմիքներ ազնիվ մարզու համար ուրիշի դժբախտություն չի լինում: Եվ այսօր լեհիակացիներին փրկության եկածների լեզուների ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ չի խանգարում, որ մտածեն ու գործեն միասնաբար, մանկան երաններին օր ու գիշեր փրկեն փլատակների մեջ ագատության սպասող մեր համախաղաղագիներին: Մենք մեծակ չենք դժբախտության ժամին: Արդեն յոթերորդ օրը ոչ մի բույս դադար չունի երկրաշարժի հետևանքները վերացնելու, տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով ստեղծված կառավարական հանձնաժողովը, երբ կոորդինացնում ու ղեկավարում է փրկության ժամանակ խմբերի աշխատանքը, հոգ տանում: մարդկանց կյանքի ապահովության ու սպասարկման ոլորտի կազմակերպությունների աշխատանքի կարգավորման մասին: Ուրեմն ասրողներս դիմագրավենք ահավոր աղետին, լինենք արիական, որպեսզի շարունակենք անմեղ հախտակների կիսատ գործը, հարություն տանք մեր սիրելի Գյումրի-Լեհիակահին:

«ԲԱՆՎՈՐ», 14 դեկտեմբերի 1988 թ.

Մեր հաղափում, 1950-ին է ծնվել Կարուշը: Աշխատել է գույպեղենի արտադրական միավորումում: Իր շրջապատի, աշխատանքային ընկերների կողմից եղել է սիրված ու հարգված անձնավորություն, ընտանիքին նվիրված ամուսին ու հայր: Գեկտեմբերյան աղետին տանն էր, չորսամկր քեակոխած ուղին գրկում: Այդպես էլ գոնվել է: Գույպեղենի ա/մ-ում գոնվեց նաև նրա հաշվապահ

ԿԱՐՈՒՇ ՌԱՅԻԿԻ
ՄԽԻԹԱՐՅԱՆ



ույրը՝ 32-ամյա Անահիտ Մխիթարյանը: Կարուշի կինը անսփուփ վշտով բանաստեղծական սրտահույզ առդեր է ուղղել իր ամուսնուն ու զավակին:
«Դու իմ փոքրիկ ծիլ, իմ մատղաշ Արմեն, ախ ես եկզ համար ինչքան եմ տանջվել, քանի և քանի գիշերներ չեմ քնել բալես, եկզ կյանք եմ տվել և պահել շատ քանակ... Իմ նուրբ, խելացի, տանս վառ նրագ,

ԱՐՄԵՆ ԿԱՐՈՒՇԻ
ՄԽԻԹԱՐՅԱՆ



նրագս հանգեց, ես մեացի մումի յույսի տակ... երկու մոմ ձեռքիս ձեզ եմ միշտ հիշում, սիրտս կարտախց տեճում, մոնչում... ես պիտի այնքան փոքրիկ շիրիմիդ հողը համբուրեմ, միեչև, իմ Արմեն, ես էլ հող դառնամ, քո հողին փարվեմ, քեզ գիբկս առնեմ, քո ծով աչքերը համբուրեմ բալես, նոր այն ժամանակ ես կհանդարտվեմ»:

ԱՆԱՀԻՏ ՌԱՅԻԿԻ
ՄԽԻԹԱՐՅԱՆ



ՎՃՏԻ ԵՎ ԱՐԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 11

Մ. Ս. Գորբաչովը եղավ Սպիտակ և Կիրովական քաղաքներում: Մոսկվայից Երեւան մեկնելուց առաջ նա Երևանի օդանավակարանում հարցազրույց ունեցավ Կենտրոնական հեռուստատեսության և Հայաստանի հեռուստատեսության համար:

Այս օրվա երեկոյան դեմ աղետի գոտում փրչառակների մարքման գործին արդեն մասնակցում են մեծ

քննադատողության 700 կրոնականներ:

Չորկին հրվանդանից Հեռավորարևելյան երկաթուղիով մեկնեց մի զնացք, որին միացվել են լրացուցիչ երկու վագոն-սառնարան սննդամթերքներով, Հայաստանում երկրաշարժից տուժածների համար: Դուշամբեից դեպի Լենինական ուղղությամբ վերցրեց շինանյութերով լի ծանր զբնացքը: Երկրի շատ քաղաքներում կիրակնօրյակներ անց-

կացվեցին, որոնց մասնակիցները վաստակած դրամը ուղարկեցին երկրաշարժից տուժածների ֆոնդին:


Երևան ժամանեց ամերիկացի բիզնեսմեն Արմանդ Համմերը: Նա բերեց մեկ միլիոն դոլարի չեկ, բուժարքավորանք, դեղամիջոցներ:

Լենինականի օդանավակարանի մոտերքում կործանվեց խորհրդային ռազմատրանսպորտային ԻԼ-76 ինքնաթիռը, զոհվեցին անձնակազմի 9 անդամներ և 69 զինծառայողներ, որոնք շտապում էին մասնակցելու փրչառակների մարքմանը:



ԱՐՏԱԿ ՀԵՆՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ծնվել է 1974 թ.: Սովորում էր № 16 դպրոցի 8-րդ «բ» դասարանում: Արվեստի դպրոցի նկարչական բաժնի երրորդ դասարանի սան էր: Նրա ստեղծագործություններից մի քանիսը աղետից հետո ցուցադրվել են Մոսկվայում և Երևանում:



ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Դեկտեմբերյան արհամիրքից մեկ օր առաջ մեր ակվարիումից երկու ձուկ սատկեց: Տասնհինգ տարեկան տղաս Արտակս ողբ ու շիվան կապեց, հետո ձկնիկները ցանցով դուրս բերեց, որեց սեղանի վրա: Կարմիր ձկնիկներ էին, փառլուն, լույս ու գեղեցկություն:

Մեր օր անց՝ դեկտեմբերի 7-ին, բեռոնն սալերի մեջ սեղմված մտածում եմ՝ երեկ երեկոյան ծամը լոթին որտեղի՞ց նրա ուղեղի մեջ բուն դրեց «երկրաշարժ» բառը: Մթնշաղը քաղաքի վրա նոր էր փռել իր թևերը, որ տուն մտավ ու չթողնելով մի բառ ասել, զայրանալ ուշ տուն գալու, դասերը կհաստ-պոստ սովորելու համար, հարցրեց.

~ Մարիկ, երկրաշարժ որ լինի, երրորդ հարկից կարո՞ղ ենք փախչել:

~ Ի՞նչ երկրաշարժ, ո՞վ է մտցրել ուղեղդ...

~ Չէ, չէ, առա, եթե հանկարծ երկրաշարժ լինի...:

Բացվեց մաղձոտ ու դավադիր լուսաբացը: Ակվարիումի մեջ մնացած վեց ձկնիկներից հինգը իջել էին հատակին ու ընկել մեջքի վրա:

«Ձկների մղեռն է»~ առաց ու լաց եղավ: Հետո, տխուր-տրտում, առանց թեյ իջելու, վերցրեց պայուսակն ու շտապեց դպրոց: Ամեն առավոտի պես չսպասեց, որ միասին գնանք: Մենակ էր ուզում, ձկների վիշտը սրտում, ողբալով զնաց...

Ս. ԾՇՄԱՐԻՏՅԱՆ



ՆԱԴԵԺԿԱ ՍՈՒՐԵՆԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Նաղյան... կատակասեր էր, բոլորի կողմից հարգված ու սիրված: Ծնվել էր Լենինականում, 1940-ին: № 5 դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Երեւանի ֆինանս. ստատեսագիտական տեխնիկում: 1961 թ. ու պես հաշվապահ աշխատանքի անցավ Լենինականի պետական կոնստրուկտորական գործարանում: Հետո քառեկազման զբոսաշրջական աշխատեց որպես զանգվածային, 1979-ին իր դիմումի համաձայն, ազատվեց պաշտպանության և եկավ «Բանվորի» խմբագրություն, որ հաշվապահ-զանգվածային ներառաշխատանքն անհրաժեշտ էր: Զոհվեց խմբագրության շենքում՝ մինչև վերջ մտուփի չբաժանվելով երկու որդիներից, հարազատներից ու ընկերներից...



ՄԱՍԻԿՈՆ ՄԻՍԱԿԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Լավ ձեռք, արհեստավորի շնորհ ուներ 24-ամյա Մամիկոն (Մանվել) Խաչատրյանը: Գեղաչ էր և մոր աչքի լույսը: Սովորեց Ծառուսյանի, ապա և Ծուշանիկ Կուրդիանյանի անվան դպրոցներում, այնուհետև Ախուրյանի № 85 պրոֆ. տեխնումնարանում որպես ավտոփականագործ: Սիրում էր աշխատանքը: Զինծառայությունից հետո աշխատեց Դուկասյանում, իսկ երկրաշարժի ժամանակ կոշիկի անհատական պատվերների և նորոգման «Նաիրի» ա/մ-ի Լենինականի (Տարտուհ մոտ գրուներվող) մասնաձյուղում էր, որ աշխատանքի էր անցել որպես վարպետի աշակերտ: Հանձնաձեռն աղետից զոհվեց աշխատավայրում:



ԱՆՈՒՇԻԿ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գերազանց գնահատականներով ավարտեց № 14 ուսական դպրոցը և նույն թվականին ընդունվեց Լենինգրադի № 1 բժշկական ինստիտուտ: Փայլուն կերպով ավարտեց նաև բուհը՝ ստանալով մանկաբարձ-գինեկոլոգի պատվավոր մասնագիտությունը: Մինչև կործանարար ցրված ցամաքի սկսվելը, 26-ամյա բժշկուհին արդեն աշխատանքը ավարտել էր, բայց հետ կանչվեց աստիճանների վրա լից՝ ծանր հիվանդին օգնելու, նորածինն ու ջահել մորը կյանք պարզելու նպատակով: Հիպոկրատի երդմանը հավատարիմ, ընկալ ինչ պես ստուպ...



ՀՈՒՓՈՒՄԵ ՆՈՐԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Ծնողներին ուրախացնող զբոսաշրջականներով 1987 թ. ավարտեց № 30 միջնակարգ դպրոցը: Հասցրեց ավարտել նաև № 4 երաժշտական դպրոցը: Որքան մեծ եղավ մոր՝ Բնարիկի ցնծությունը, երբ որոտորը 1988-ին դարձավ Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի: Դեկտեմբերի 7-ին լսարաններից մեկում էր: Չբնացրեց դուրս գալ խորտակվող շենքից: Դեռ նոր երեք ամիս ուսանած, քարձրագույնի ուսանող լինելու քաղցրությունը չնաշարժեց, դաժան արհամիրքի անմեղ զոհերից մեկը դարձավ 19-ամյա այդ ժրպտուն ուսանողուհին:



ԿԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԶԱՔԱՐՅԱՆ

...№ 10 դպրոցում էր սովորում: Մոր՝ գրադարանավարու հի Անահիտ Մուրադյանի միակ որդին էր, նրա հետ անչափ կապված: Ընկերասեր էր, իսկ առարկաներից աշխարհագրությունն էր սիրում: Ամեն երեկո թերթում էր քարտեզը, ընկուց առաջ քարձի տակ դնում: Փլվածքների տակից մայրը գտել է այդ քարտեզը և պահում է որպես սուրբ մատուց: Կարենը որոշել էր սեփական ձեռքերով գեղեցկացնել տան պատերը, բայց դրանք, սպա՞ղ, չկարողացան դիմանալ, փշրվեցին ու փլվեցին...



ԱՆՆԱ ՅԵԼԻԲՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սաչյա այս աղջիկը՝ Աննան, շատ էր երագում ուսուցչուհի դառնալ, փոխարինել մանկավարժ ծնողներին: Յ տարեկանից խաղում էր դպրոց-դպրոց, սիրում էր գիրք ու գրականություն:

Սովորում էր բարձր առաջադիմությամբ, լուծում բարդ խնդիրներ, հայրիկի հետ սուզվելով մաթեմատիկայի խորախորհուրդ աշխարհի մեջ: Երագլուտ հայացքը միշտ ուղեկցում էր նրան, հասցնում էր փոքրերին օգնել դասերը պատրաստելիս:

Ամեն անգամ դպրոց էր գնում պատրաստ ու պարտաճանաչ: Օրագրում միայն հինգեր էր: Պետրոսյանի անվան դպրոցի 8-րդ «ա» դասարանում էր սովորում: Մինչև հիմա էլ մայրը՝ Սուսաննա Գրիգորյանը, ըստ պատմ է դուտեր վերահարձին: Անունը լսելիս շուտ է գալիս, նայում, փրկություն իր սիրաատն գալալին...



ԼՈՒԼԻՏԵ ԶԵՆՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Աշխատանք աղջիկ էր Լուսինեն: Զբաղվում էր ասեղնագործությամբ և դասերից հետո օգնում էր մայրիկին մեքենայով ծաղիկներ գործելու և վարդեր հյուսելու, հարուստ երևակայությամբ հարմարեցնում տարբեր ըզգեստների, կյանք տալիս հագուստներին, իսկ սեփական կյանքին այնքան քիչ ժամանակ էր մնացել:

Ավարտել էր նաև երաժշտական դպրոցը: Այնքան գեղեցիկ ծրագրեր, անելիքներ ուներ, որոնք փոշիացան, այդպես էլ լույս աշխարհ չեկան: Ինչպես էր ուզում դաշնամուրի նվագակցությամբ երգել հայրենի երգերի շարանը՝ «Քելե, լառ», «Արցախ», «Զարթիր, լառ» և մյուսները:

Օգնում էր թույլերին դասապատրաստման գործում, ընկերուհիների մեջ հարգանք վերաբերմունք մշակում ավագների հանդեպ: Կիսատ մնաց հեթանոսական ասեղնագործ աշխատանքը, մոր սրտի պես բարացավ դաշնամուրը...



ՄԱՐԻՆԵ ԿԱՐՈՒՇԻ ՄԿՐՏՉՅԱՆ

№ 16 դպրոցի 10-րդ «Ա» դասարանում էր սովորում: Ավարտել էր նաև երաժշտական դպրոցը: Հոյակապ ձայն ուներ և դպրոցում ու բարեկամների ուրախ հանդեսների ժամանակ ուրախացնում ու ջերմացնում էր մթնոլորտը, բերկրանք պատճառում շրջապատի մարդկանց: Որ Մարինեն էր հայտնվում, այնտեղ ուրախություն էր հորդում, թարմացնում, հուզում էր մարդկանց, ցրում բոլորի թախիծն ու վիշտը:

Երագում էր դառնալ երգչուհի, Էստրադայի աստղ: Աշխատանք էր տանն օգնում էր մայրիկին բոլոր գործերում, թեթևացնում նրա հոգաբ: Փոքրիկ եղբոր տնային ուսուցչուհին էր: Համեստ էր, խոհեմ, ջերմ ու մարդկային: Գնաց դպրոց, որ հետ գար, եղբորը դպրոց ուղեկցեր, բաց չհասցրեց: Թերացավ այդ միակ գործում...



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԻ

Սուսաննա ծնվել էր 1939-ին, Թբիլիսիում: Ուսումը հենց վրաց մայրաքաղաքում էլ ստացել է և միայն ամուսնությունից հետո է տեղափոխվել Կոմայրի: Ընտանիքի համար հիանալի հոգատար կին էր ու անգնահատելի մայր:

Ամբողջ կյանքը անմագորդ իր ընտանիքին էր նշվիրել Սուսաննան: Հիանալի տանտիրուհի էր, սիրում էր մաքրություն, ծաղիկներ, որոնք միշտ գեղեցիկ խնամված էին: Ամեն կերպ ձգտում էր, որ տունը լինի հարմարավետ և ամեն ինչում ըզգացվում էր նորը ճաշակ, հոգացողություն: Գերազանց տիրապետում էր թե հայկական և թե վրացական խոհանոցներին: Ուներ անմիջական ու ջերմ ընկերություն, ամեն ինչով էր հետաքրքրվում, առավել ևս՝ արվեստով: Փետրվարի 3-ին լրանալու էր այս կենսուրախ կնոջ 50-ամյակը, սակայն դաժան ճակատագրի բերումով այդ օրը սուգ էր ու սառը լույություն:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԿԱՐՈՍԻ

Զարմանալի լուրջ ու բընքուշ այս էսկը ծնվել է 1961 թ-ին: Դպրոցն ավարտելուց հետո չգիտեր որ ճանապարհըն ընտրել: Դասարանում առաջինն էր մաթեմատիկայից: Սիրում էր պատմություն, լեզուներ: Չէր բավարարվում դպրոցական ծրագրով: Ծառ էր կարդում: Հանրակրթականից գուգահետ ավարտեց նաև երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը: Վերջապես հրապուրվեց անգլերենով և ընդունվեց Բյուրուսի անվան օտար լեզուների ինստիտուտը:

Բռնի ավարտեցուց հեկո Մարինեն հայրենի քաղաքի № 40 պրոֆտեխտումնարանում ավանդում էր շատ սիրելի դարձած առարկան: Բնագրով կարդում էր անգլերեն գրքեր: Դասի ժամանակ խաչեր էր հորինում և ամեն կերպ ջանում առարկան մատուցել հետաքրքիր և ուշագրավ: Նրբության, բարության ու անմիջականության համար Մարինեն վախելում էր ընկերների սերն ու հարգանքը:

ՈՒՐ ԷՐ աստված, երբ կոտորվում էր ամբողջ մի ժողովուրդ



Ին քո արածը արած է, որդիս: Ահա դու գնացիր ու տանս մնացին միայն աղջիկները:



ԱՐՏԱԿ ՀԱՅԿԻ ՄԻԻԹԱՐՅԱՆ

1978 թվականի սեպտեմբերի 1-ին է ծնվել՝ Գիտելիքների օրը: Ամեն սեպտեմբերի մայրը կտեսնի դպրոցահասակ երեխաներին պարտասկները ձեռքերին և կսգա իր սե բախտը:

Յ տարեկան հասակում Հուլի հաճախել է Ծառույանի անվան դպրոց, սիրելի դասվար Ասողիկ Տարսիսյանի դասարանը: 1986 թվականի նոյեմբերի 7-ից ուսումը շարունակել է № 18 դպրոցում, որը և դարձավ իր ման անմեղների գերեզմանը: Սովորում էր 5-րդ դասարանում: Գերազանցիկ էր, աշխույժ ու ծիր տղա, ծիծաղկոտ, ծպտերես:

Ռուսաց լեզվի դաս էր, երբ սկսվեց ահավոր երկրաշարժը: Մեկ ժամ էլ չէր անցել, երբ մայրը՝ Կարինե Մխիթարյանը, գտավ նրան...



ԹԱՄԱՐԱ ՌՈՒԲԵՆԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

1968 թվականի դեկտեմբերի 26-ին է ծնվել: Սովորել է Խաչատուր Աբովյանի անվան դպրոցում: 8-րդ դասարանից փոխադրվել է մաթեմատիկական թեքումով կրթօջախ: Գերազանց ավարտելով միջնակարգը, նույն տարում ընդունվեց Կոմայրիի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական բաժինը: 3-րդ կուրսում էր սովորում կյանքով սույնցուն Մարինեն, ըստ պատելիքներ ուներ կյանքից, գեղեցիկ երագներ էր հյուսում, սպասու ծրագրեր կազմում, որոնք բոլորն էլ կու գնացին դեկտեմբերյան ամհագուրդ աղետին...



Ընդամենը 21 գարուն «բաժին» հասավ ՀԱՍՄԻԿ ՄԱՂՈՑԱՆԻՆ՝ ԵրԳԻ-ի Կոմայրիի մասնաճյուղի 5-րդ կուրսի ուսանողուհուն: Մեկնելու ամսվա ամուսնացած էր, որ զոհվեց Հայոց Դժբախտության էպիկենտրոնում՝ Սպիտակ քաղաքում, գործարանում աշխատելիս: Դեկտեմբերի 7-ի առավոտյան նա այդպես էլ մորը չպատմեց գիշերվա վատ երազը, «որպեսզի... չկատարվի»: Արդյոք ի՞նչ կրագ էր, որ կտրեց նրա բոլոր երազները...

Այնքան ջանել, կյանքի կրակով լեցուն էր ԺՈՐԱ ՄԻՆԱՍՅԱՆԸ, դարաբաղյան շարժման Կոմայրիի ակտիվիստներից մեկը: Նա չտեսավ ոչ միայն նոր Հայաստանի, այլև այնքան պատասճ գաղափար՝ Լատրայի ծնունդը: Պարզ, ազնիվ ո՞ւր անշահախնդիր էիր դու, ակտիվ ու համարձակ, և թո սուրբ հիշատակին թող դափնի (լավր) լինի թո Լատրա դուստրը: Վստահ եղիր, որ թո Արցախը կազատագրվի, թո ազգը ազատ կլինի...

Քեզ՝ ԶԱՎԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ, որ ընդամենը 38 տարեկան էիր, հարգում, սիրում ու մեծարում էին և՛ հարազատներդ, և՛ աշխատանքային ընկերներդ: Այնքան նըվիրված էիր կնոջդ ու երեք զավակներիդ, որ այսօր էլ նրանք սգում են քեզ, վատ պահում հիշատակդ: Կինդ՝ Թամարան, հարազատներիդ օգնությամբ ու աջակցությամբ մեծացնում է Անդրանիկիդ, Հովհաննեսիդ և Մարիամիկիդ: Այս աշխարհում դու ոչ մեկին պարտք չունեիր, սա-

կայն շատերը, որ ողջ են մնացել, քեզ պարտք են թո նվիրման դիմաց: Խաղաղ ննջիր, անմեղ զոհ...

Երաժշտությունն էր ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ տարերքը: Քեզ այսօր էլ, Սուսաննա, հիշում են 24-րդ դպրոցի թո աշակերտները, հրաշքով փրկված աշխատանքային ընկերներդ: Երկու տարի է անցել, ինչ դու չկաս, սակայն չի փարստվում թո ծնողների ու հարազատների վիշտը: Թախծոտ են Իզաբելլայդ և Էդիկդ, իսկ փոքրիկդ՝ Բրիստիենն, այսօր էլ լալիս է ու... «մամային եմ ուզում»:

Ո՞ր չար ձեռքը սևով պատեց թո ու քեզ նման հազարավորների կյանքը: Դու դա չգիտես, ինչպես որ չգիտենք ողջ մընացածներս, սակայն ինչ-որ բան կոսհում ենք...

Հրաշալի մարդ ու հրաշալի արհեստավոր էր ՍԵՐՅՈՒՄ ԳՈՂՈՍՅԱՆԸ, և ադետը նրան կող տվեց հենց աշխատանքի ժամին: Երեք 9 հարկանի շենքեր գահավիժել էին թո և աշխատանքային 68 ընկերներիդ գլխին: Օրեր էին անցնում, սակայն թո դիակը չէին գտնում երեք զավակների ու եղբայրներիդ: Եվ օ՛հ, զարմանք. դու երազ եկար Արարատ եղբորդ ու... հայտնեցիր՝ շենքերին մտնիկ գտնվող վագոն-հանգերձարանում փնտրել: Ավերակները բանդեցին ու գտան քեզ...

Դաժան արհավիրքը չխնայեց նաև բույր ու եղբայր ԺԱՆՆԱ և ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻ-

ՐՈՍՅԱՆՆԵՐԻՆ: Մի բանի օրից լրանալու էր Ժամայի 29-ը տարին, իսկ Համետը այդպես էլ չտեսավ իր կյանքի 36-րդ գարունը: Երկուսն էլ ունեին իրենց ընտանիքները, երկուսիսն զավակներ...


Դեկտեմբերի 7-ի առավոտյան Ժամանս դողդողալով մորը պատմեց գիշերվա երազը «...սև օձը փաթաթվել էր վզովս ու խեղդում էր: Վախենում եմ Մարինեիս ու Սարգսիս համար»: Ավա՛ղ, կատարվեց՞ նրա երազը, «Մանկական աշխարհ» հանրախանութը փուլ եկավ նրա ու հարյուրավոր մարդկանց գլխին:

Օրեր անց Համետի ոգին երազ եկավ մորն ու պատմեց, թե ինչպես է զոհվել. «...հագիվ էի ձեռքս երկարել ընկրոջս տան դուսն բռնակին, երբ դուրը խորտակվեց ու ծածկասպերը եկան վրաս, փրկվել չկարողացա»: Ու որք մնացին նրա Անժելա և Արմինե դուստրերը:

Այս անմեղ զոհերի հարազատները, մոտիկ բարեկամները ամեն ինչ անում են, որ փոքրիկները անոոգ մեծանան, սակայն առանց ծնողի այնքա՛ն է դժվար...

Հարազատներ, բարեկամներ ու հարեկաններ, հիշեցեք Համետին ու Ժամային, բարի աչքով նայեք աղետից հրաշքով փրկված նրանց երեխաներին:

Այս 7 անմեղ զոհերին մինչև իր կյանքի վերջին պահը կսգա Արաբյա Գողոսյանը: Կսգան բոլոր հարազատներն ու բարեկամները, հարևաններն ու ծանոթները, նրանք, ովքեր Աստոն կամոք ողջ են մնացել:



ՍԱՄՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՅՂ ԱՅԱՎՈՐ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը

1988 թ. ՎԱԿԱՆՆԻ ԱՂԵՏԻՑ ՁՈՂՎԱԾՆԵՐԻ ՀԻՇՍԱԿԻՆ

1. Ա. Կ. Ն. Թ. Ա. Ր. Թ. Ո. Ի. Մ.

Ակնթարթում հանգան լույսերն երազանքի Եվ սասանվեց հողը, ջուրը, վանքս ալևոր, Բաղաբ խոժեց, ոռնաց վիշապն արհավիրքի Ու բյուր տրտե՛: ակնթարթում դարձան սզվոր:

Բեկվեց ցողը կենաց ծաղկի առէջքներում, Լոեց մուրճը, բեկվեց տողը բանաստեղծի, Չհասկացա, այդ ինչքան շատ քո ձեռքերում Դժոխք դարձավ իմ դրահաղը, գողտրիկ Գլու՛մրի:

Այդ ինչ ձեռք էր, որ թույն խառնեց քո սուրբ հացին, Այդ ինչ ձեռք էր, որ հարվածեց քեզ թիկունքից, Չհասկացա, լույսերս ինչպես փրկվեցին, Ինչ որոտ էր, որ շառաչեց հողի խորքից:

Դու դիմացար, ինչպես շանթից բաշը լնուան, Փաղատակեց արհավիրքից ոգիդ վայրի, Ակնթարթում հազար-հազար լույսեր հանգան, Բայց կանգնեցիր ու տոկացիր, իմ Կումայրի:

2. Տ Ե Ս Ս.

Ես տեսա քո վիշտը, երկիր Լսեցի քո ճիչը երկինք, Մեր ցավին գորավիզ եղան Բյուրավոր ու բարի մարդիկ:

Հանգած աստղի մոխիր տեսա Եվ աղետալ ճակատագիր, Տեսա ոգիդ աստվածագոր Իմ հայոց հող, հայոց երկիր:

3. Թ. Վ. Ո. Ի. Մ. Է. Հ. Ս. Ճ. Ա. Խ.

Թվում է հաճախ, որ ես էլ Ընկա այնտեղ՝ բարերի տակ, Որ էլ չկամ, ոգի եմ, ու՛րու, Սափառում եմ արևի տակ: Մերթ թվում է, թե ապրում եմ Ու տրեմում եմ այլ աշխարհում, Նույնն են հողը, ջուրը, մարդիկ, Նույն հունով է գետը հոսում:

Հեռացել եմ ես ինձանից Յոթը հարյուր լուսատարի, Կյանքը սիրուն մի տեսիլք է, Դառն է համբ աստապանքի: Ես ապրում եմ, գիտեմ, ահա իմ աչքերից լույս է հորդում, Բայց աղետից հետո իմ մեջ Փլվում է նոր գմբեթ ու տուն:

4. Չ. Կ. Ա. Ր. Ո. Ղ. Ա. Յ. Ա.

Այս, չկարողացա, չհերիքեց ուժս, Չկարողացա՝ քեզ աղետից փրկել, Փլուզված շենքի բետոնապուճը Այսօր էլ սրտիս վրա է ընկել: Ես դեռ լսում եմ քո լացը, ճիչը, Բո հեծկլտանքը, հառաչը վերջին Ու դեռ չգիտեմ հառա՛վ քո ճիչը, Հասավ քո լացը աստծո ականջին:

Իմ երազներում այրող ու մթին Ես դեռ կոլում եմ քար ու ցավի հետ, Տեսնում եմ ինչպես քույրեր երկնային Բեզ դուրս են հանում խավարից ահեղ: Անաղձուկ, ինչպե՛ս կարտոի հունը Երկինք են տանում կենաց երգերով, Եվ դու գրկում ես անեզրությունը Բո փոքրիկ-փոքրիկ անվարձ ձեռքերով:

5. Կ. Յ. Ա. Ն. Գ. Ի. Բ. Ա. Հ. Վ. Ա. Ն. ՍՍ. ՀՄԱ. ՆԱԳ. ԾՈՒՄ

Վազում էի խելակորույս, վազում էի ինքնամոռաց, Թվաց, ինձ է հետապնդում ինչ-որ մի ձեռք արյունամած: Երեքում էր հողը, միտքը, երեքում էր քաղաքը ծեր, Որ բաշխել է մեզ հայրաբար հույսի, խոկման անթիվ զանձեր:

Վազում էի ու հոտոտում քար ու փոշի, արյուն ու վերք, Վազում էի ու որոնում ես իմ որդուն եղեգնածն: Բախտ էր, հարկավ, վերին ընծա խորհրդավոր ու գորավոր,

Երբ ավերված դարստանը գոա որդուն իմ վիրավոր: Ինչքան մահեր այդօր տեսա, քանի՛ անգամ ես մահացա, Վարկյանի մեջ ահագնացա, վարկյանի մեջ ես ծերացա: Եվ երբ մթնեց օրը դաժան, զարհուրելի ու խելագար՝ Մարտնչում էր գիշերվա դեմ խարույկների հուրը համառ:

Եվ իր հունով անդեռախոր հոսեց խոով գետը կյանքի, Եվ գիշերում լուռ վառվեցին լապտերները երազանքի:



Շառը Ազնավորը Լեհինականում:





ՄԱՐՏԻՆ ՍԱՄՍՈՆԻ
ՀՆԱՊՈՅՑԱՆ

Չորրորդ տարին էր, որ աշխատում էր քաղաքային ծընդդիմությանը: Եկել էր Իրկուտակից, որ ավարտել էր բժշկական ինստիտուտը, որ աշխատել էր որպես բժիշկ-գինեկոլոգ, որ բախվել էր մարդու ծննդի ու մահվան սպանակիքների հետ:

Լեհիականը այնպես ընդունեց նրան, ասենք Իրկուտակում իր հետ էին եղել: Ի՞նչ իմանային շրջապատողները, որ ստույգ երիտասարդի ծնված առաջին օրվանից էր պարտադրել նրան՝ մշտապես հաղթել մահին: Մայրը մահացել էր ծննդաբերելուց, սիրտը չէր դիմացել: Իսկ նորածինը գորել թաթիկներով, իր աղաղակով հայտնել էր, որ կապրի ու կենձանա, կդառնա բժիշկ և չի թողնի, որ ոչ մի ծննդյան գոհվի երկունքից:

...Դեկտեմբերի 7-ի օրը, ժամը 11.39 րոպեին դադարեց ծննդյան Ստեփանի արյունահոսությունը: Հակորյանը մոտեցավ սեղանին, որ հիվանդն էր: Հենց այդ վայրկյանին սկսվեց երկրաշարժը: Բրժիշկները, հիվանդը գոհվեցին նույն պահին, երբ քառասարկ շենքը ծալվեց թաշկինակի պես:



ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒԾԵՂԻ
ԶՈՒԼՀԱԿՑԱՆ

Մուսանան «Մանկական աշխարհ» հանրախանութի կոշկեղենի բաժնում էր աշխատում: Կենսագրության մեջ կարևոր և նշանակալից իրադարձություններ չեն եղել, սակայն ողջ կյանքը նվիրում էր և գոհաբերում: Ընդամենը 17 տարեկան էր, երբ մահացավ մայրը, հոր խնամքին թողնելով չորս որբերին: Սուսանն ավագն էր, իսկ փոքր եղբայրը՝ Վարդանը, 4 տարեկան էր:

Ահա այդ օրվանից էլ Սուսանն ստար կանգնեց հորը, կիսեց երեխաներին խնամելու ծանր հոգսը: Իր ողջ կյանքը նվիրաբերեց բոլոր ու եղբայրներին, լիովին փոխարինելով մորը:

Չունեցավ իր ընտանիքը, բայց երջանիկ էր բոլոր և եղբոր ընտանիքների հետ:

Ահավոր երկրաշարժի օրը Սուսանն հերթական արձակուրդի մեջ էր: Աշխատանքի վայրից զանգահարեցին և հայտնեցին, որ մյուս աշխատակցուհին չի ներկայացել աշխատանքի: Ժառանգելուց անգամ չէր նախաճաշել:

Ինչպես որ ասել էր անաղմուկ ու համեստ, այդպես էլ մահն էր:



ՍՈՒՍԱՆՆԱ ՆԻԿՈՒԱՅԻ
ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1950 թվականի փետրվարի 1-ին, Լեհիական քաղաքում: 1957 թվականին ընդունվել է №14 դպրոցը և ավարտել 1967 թվականին: Նույն տարում նա ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: 1973 թվականին Սուսանն Խաչատրյանը ավարտելով բժշկական ինստիտուտը, գործողվեց աշխատանքի Լեհիականի №1 մանկական պոլիկլինիկա՝ որպես մանկաբույժ: Մեկ տարի անց նույն մասնագիտությամբ նա աշխատանքի անցավ քաղաքային ծննդատանը: Ամուսնացել է 1977 թվականին: Ուներ մեկ տղա և մեկ աղջիկ:

Սուսանն Խաչատրյանի կյանքի բոլոր նշանակալից իրադարձությունները տեղի ունեցան ծննդատանը աշխատելիս: Նա սիրեց, ամուսնացավ, աշխատեց կյանքի ակունքների մոտ՝ ստաջինը ընդունելով մարդկային կյանքի ծնունդը: Այդ բնական գործընթացը լիքն էր անակնկալներով, վտանգներով, նախ խընդությունը, երջանկությամբ:

1988 թվականի դեկտեմբերի 7-ի ճակատագրական օրը նա գտնվում էր ծննդատանը, նորից իր 1-2 օրական «քաղաքացիների», իր ստաջին պացիենտների հետ էր...



...ԱՆՅԴ ՀՊԱՐՏ ԵՎ
ԲԱՐԻ ՀԵՂԻՆԵՆ

«Ով սիրում է մարդկանց, նա երկար է ապրում». նախ հակառակ առածն է ստում: Ավաղ, չար աղետը չթողեց, որ մարգարեանային այս խոսքերը: 26 գարուն ապրեց այդ գարնանահարաշ աղջիկը, սպորձ՝ հոգում փայտալեղով նվիրական մի իղձ. մեկ անգամ ևս փորձել ու հիմնավոր կրթություն ստանալ, նվիրվել իր սիրած՝ երաժշտության աշխարհին: Նա համեստ էր ու բարի և այնպես էր սիրում կյանքը:

Երազանքը պահելով հոգու ծայրերում, Հեղինեն գնաց արտադրություն, աշխատեց կարի №2 ա/մ-ում որպես հաշվապահ: Երաժշտական դպրոցի սանը այնպես կապված էր հնչյունների աշխարհին, այնպես սիրում էր ամուսնել: Հաճախ էր նա մեծ բանաստեղծ Օրբելի ինքնագրով լուսանկարը ցույց տալիս ծանոթ-բարեկամներին, որ ինքն էր ու բանաստեղծը: Նրա ամուսնին շատ էր հավանել վարպետը և գովեստի խոսքեր էր գրել լուսանկարի հետևում, ցանկանալով շնորհալի աղջկան երջանիկ ու լուսավոր ապագա...

...Չոհվեց ֆարիկայի բակում, երբ այնպես հեռու էր թվում մահը, ցայտադրյալի մոտ և աղջկա հատաչանքները միախառնվեցին ջրին:



ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՆԻ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կումայրի քաղաքում է ծընվել, 1957-ի մայիսի 28-ին: 6 ամսականից գրկվել է հայրական հոգատարությունից:

Մայրը՝ Հռիփսիկ Սիրունյանը, կրթանիկ էր ամուսնացած երեխաների երջանկությանը: Պրոֆեսիոնալ մարտնչուհի Կարապետի արտաքին երթուղիների մասնագիտություն: Ծառայեց խորհրդային բանակում: Բանակից վերադառնալով, անմիջապես աշխատանքի անցավ գույպեղենի արտադրական միավորումում, հետևելով հմուտ գույպաչափոր մոր օրինակին: Ձեռնարկության կամարների տակ է ներմայել մոր մազերը: Գործող-թողարկող արտադրամասում էր աշխատում նաև Կարապետի քույրը:

Դաժան երկրաշարժը կախվեց հայ ժողովրդի երջանկության վրա: Կարապետի սիրած ծննդավայրը ընկղմվեց խավարի մեջ և շատերի նրման Կարապետի սիրուն էլ դադարեց բարսիակուց աշխատանքի վայրում՝ փուլ եկած շենքի տակ... Եվ նրա բախտը նմանվեց հոր ճակատագրին. նույն տարիքին, նույն ամսին և նույնաման գույք երեխաներ թողնելով որբ: Չար բախտը Կարապետի մանկությունը նվիրեց իր երեխաներին: Գրանց երազանքները կիսատ, կյանքին կարոտ, դաժան մահով:



«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԱԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՆՈՒՄԻ
ԿՈՒՄԱՅՐԻԻ ԲԱՂՆԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅՐՈՍՅԱՆ Փ., 47